ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 19 >> 04 2013թ. N: 93-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ <<ՖՈՏՈՆ>> ՎԱՐԺԱՐԱՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՄԱՆՎԵԼ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն և դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշումներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին>> N 174-Ն որոշման 1-ին կետի դրույթները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 13-ի <<Մանվել Մովսիսյանին ՀՀ Շիրակի մարզի <<Ֆոտոն>> վարժարան պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու մասին>> N 51-Ա հրամանը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու <<Ֆոտոն>> վարժարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Մանվել Մովսիսյանի լիազորությունները 2013 թվականի ապրիլի 13-ից համարել դադարեցված:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝